

կարելի է ենթադրել, որ այդ խեցեղենի արտադրությունը շարունակվել է անգամ XI դարում: Նա գրում է. «Եզրպտոսում պատրաստում են ամեն տեսակի խեցեղեն և այնքան նուրբ ու թափանցիկ, որ եթե ձեռքդ դնես դրսի կողմից, ապա այն կերևա ներսից: Նրանք պատրաստում են քրեղաններ, բաժակներ, պնակներ և այլ ամաններ... Երանգները փոխվում են կապված այն բանի հետ, թե ինչպես են պահում ամանը»²⁴:

Ինչպես տեսանք, միջնադարյան Հայաստանի IX—X դդ. հախճապակին հայտնաբերվել է բացառապես Դվինի պեղումներից, մի հանգս-

մանք, որ մեկ անգամ ևս հաստատում է, թե Դվինը IX—X դդ. եղել է առևտրի և արհեստների խոշորագույն կենտրոն և միայն XI—XII դարերում էր, որ Անին սկսեց մրցել նրա հետ, աստիճանաբար խլելով նրանից առաջնությունը:

Ներմուծված հախճապակյա թասերի մեծամասնությունն ունի միջագետքյան ծագում և հավանաբար Դվին է թափանցել Հայաստանի միջով անցնող հարավային մեծ ճանապարհով՝ Դվին — Մանազկերտ — Խլաթ — Բաղեշ — Նիքր — Կերտ — Ամիդ, որտեղից նրա մի մուղը գնում էր Ասորիք, մյուսը՝ Միջագետք: IX—X դդ. Դվինի վարպետները ստեղծեցին հախճապակե թասերի տեղական տեսակները, որոնք շատ ինքնատիպ են և ունեն փամանակի հայկական արվեստին բնորոշ գծերը:

Ա. ԺԱՄԿՈՉՅԱՆ

²⁴ C. Schweifer, Trans Sefer Namch, «Relation du voyage de Nassiri Khosrau», Paris, 1881, էջ 151:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

DER MELKONIAN-MINASSIAN CHAKÉ. *L'Épopée populaire Arménienne David de Sassoun*. Etude critique. Montréal, Les presses de l'Université du Québec, 1972. 221 pp. ill.

«Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոսի մասին գրված այս քննական ուսումնասիրությունը բաղկացած է ներածականից և 4 ծավալուն գլուխներից:

Ներածականում հեղինակը մանրամասն քննարկում է ժողովրդական դյուցազներգության ակունքները, նրա էպիկական հերոսների առանձնահատուկ նկարագրերը, բարու և չարի, լույսի և խավարի հակասությունը, բարու ներկայացուցիչների հաղթանակը:

Գրքի առաջին գլխում՝ «Հայ ժողովրդական էպոսի հայտնության պատմությունը» վերնագրի տակ, Շ. Տեր-Մելքոնյան-Մինասյանը խոսում է հայ ժողովրդի պատմության, Գարեգին Սրվանձատյանցի գտած դյուցազներգության առաջին տարբերակի և Մանուկ Աբեղյանի գտած երկրորդ տարբերակի մասին:

Երկրորդ գլխում ընթերցողներին ներկայացված է էպոսի նկարագրությունը շորս երգերով՝ Սանասար և Բաղդասար, Մեծ Մհեր, Սասունցի Դավիթ և Փոքր Մհեր:

«Հայ ժողովրդական դյուցազներգության աղբյուրները» խորագիրն է կրում երրորդ գլուխը, որտեղ հեղինակը քննության հարց է դարձնում հետևյալ պրոբլեմները՝ շորս երգերի ծագման աղբյուրները, հերոսների լեզվաբանական և պատմական ակունքները, Դավիթի մանկությունը, VII—X դարերի պատմական անձնավորությունները էպոսում, Դավիթի անձ-

նավորության պատմական աղբյուրների սինթեզը, Դավիթի մահը, Սասունը՝ որպես ժողովրդական դյուցազներգության օրրան, սասունցիների կենցաղի սոցիալ-տնտեսական ասպեկտները, XII և XIII դարերի ազդեցությունը դյուցազներգության վրա:

Չորրորդ գլուխը վերլուծական մի ուսումնասիրություն է, որտեղ հանգամանորեն քննարկված են էպոսի էերքին կառուցվածքը, տեխնիկան և ոճը, հերոսների բնութագրերը, կատարված է նրանց համեմատումը էպիկական այլ հերոսների հետ, խոսվում է դրական հերոսների, նրանց կանանց և մուլերի, թշնամիների, էպոսի թեմաների (ազատություն, պատերազմ, խաղաղություն, բարոյական մեծություն, դեմոկրատիզմ, նախանձ ու վրիժառություն, լավագույն մի աշխարհի հեռանկար) մասին, քննարկվում է էպոսի արվեստը և այլն:

Եզրակացությունում հեղինակը նշում է, որ 1939 թ. սկսած, այսինքն Սասունցի Դավիթի հաղթանակի տոնակատարությունից հետո, օտար լեզուներով բազմաթիվ թարգմանությունների շրջանում միջազգային հասարակայնությունը ծանոթացել է էպիկական գրականության այս հրաշալիքի հետ: Չնայած հայերեն և ռուսերեն բազմաթիվ ուսումնասիրությունների առկայությանը, արևմտյան երկրների լեզուներով ուսումնասիրությունները համեմատաբար ավելի հազվադեպ են, քանի որ Սասունցի Դավիթի տեքստի ֆրանս-

սերեն և անգլերեն թարգմանությունների (այն էլ ոչ բոլոր պատումների) հրատարակությունը սկսվում է միայն 1964 թ.։ Հեղինակը բարձր է գնահատում Ֆրեդերիկ Ֆեյգի կողմից կատարված ֆրանսերեն թարգմանությունը, որն իր կարծիքով ավելի հարադատորեն է վերարտադրում մեր էպոսի ընդհանուր մթնոլորտն ու ոճը։ Հեղինակը այսպես է եզրափակում իր ուսումնասիրությունը. «Սասունցի Դավիթը երկրազնդային մի սիմբոլ է։ Մենք չգիտենք ոչ մի ուրիշ էպոս, որը կարողանա պատկերել այս-

քան լայնությամբ և ժամանակի ընթացքում այս-քան տևականությամբ մի ամբողջ ազգի բախտն ու ճակատագիրը, իր պատմության լեզենդար սկիզբներից մինչև ամենանորագույն էջերը։ Այս բոլորը շնորհում է Սասունցի Դավիթին ոչ միայն տիտղոս, այլ նաև ճշմարտապես ազգային և բացառիկ մի դյուցազներգության խորը բովանդակություն»։

Գրքի վերջում ղետեղված են մատենագիտական ցանկեր։ Այն նկարագարողված է և պատշաճորեն ձևավորված։

KAROLY GOMBOS. *Orményország. Tájak, varak, kolostorok, Fényképezte: Gink Károly, Budapest, Corvina Kiadó, 1972. 60 pp. ill.*

Արվեստագիտության դոկտոր Կարոյ Գոմբոշի «Օրմենիորսագ» («Հայաստան») գիրքը հունգարերեն լեզվով ընթերցողներին համառոտակի ներկայացնում է մեր երկրի դարավոր մշակույթը։

Հայ ժողովրդի պատմության հակիրճ ակնարկից հետո «էրեբունի-Նրեան», «Գառնի», «էջմիածին», «Աշտարակ», «Զվարթնոց», «Սևւան», «Հաղարծին», «Գոշավանք», «Գեղարդ», «Այրիվանք», «Մատենադարան» գլուխներում ներկայացված են համապատասխան պատմական հուշարձանները՝ գունավոր նկարազարդումներով։

«Կորվինա» հրատարակչության լույս ընծայած այս շքեղ հատորի լուսանկարները պատաստել է Կարոյ Գինկը։ Գրքի վերջում ղետեղված են 146 լուսանկարներ, որոնք պատկերում են էրեբունիի, Կարմիր բլուրի, Գառնիի, էջմիածնի, Փարպիի, Աշտարակի, Զվարթնոցի, Սևանի, Հաղարծինի, Գոշավանքի, Գեղարդի, Նրեանի պատմական հուշարձանները։

Այս հուշամատյանը Հայաստանը և հայ մշակույթը հունգարացիներին ծանոթացնելու հիանալի մի գործ է, որը լույս է ընծայվել ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի կապակցությամբ։

أديب السيد، أرمينية في التاريخ العربي. ١٩٧٣. ٣١٦ ص.

«Հայաստանը արաբական պատմության մեջ» վերնագրով լույս տեսած այս գիրքը սիրիացի գրող էդիբ էլ-Սեյյեդի աշխատությունն է, որը բաղկացած է երկու մասից։

Գիրքը ներկայացնող բժիշկ Թ. Թորանյանը առաջարկում գրում է, թե «Հեղինակը երկար ժամանակ ուսումնասիրած ըլլալով արաբ անվանի պատմագետներու գործերը, վեր հանած է արաբ-հայկական հարաբերությունները, հատկապես մեր թվականության VII—XIV դարերը պարփակող։ Այս հրկասիրության ընթերցումով արաբները տեղյակ կդառնան մասնավորաբար հայ Ռազրատունիներու գործունեության։ Գիրքը կբացատրե իսլամին կեցվածքը տարբեր կրոններու հետևող ժողովուրդներու և խմբակցություններու նկատմամբ, շեշտելով իսլամ-հայկական հարաբերություններու ջերմությունը»։

Հետաքրքրական է նշել այն հանգամանքը, որ առաջին անգամ լինելով սիրիացի մի գրող

ներկայացնում է Հայաստանը արաբական պատմության մեջ։ Նրկասիրությունում հատկապես ընդգծված են արաբ-հայկական պատմական փոխհարաբերությունները։ Հեղինակը ցույց է տալիս, որ բաղմաթիվ արաբներ հաստատված են եղել Հայաստանում, որ այստեղ աշխատել են բաղմաթիվ հուշակավոր գիտնականներ ու քաղաքական գործիչներ։ Քիչ չի հղել նաև այն հայերի թիվը, որոնք ապրելով արաբական աշխարհում, տվել են անվանի դեմքեր դիտության ու քաղաքականության ասպարեզներում։

Այս ուսումնասիրությունը հայ-արաբական դարավոր կապերի մի վառ ապացույց է և մեր օրերի արաբ ընթերցողների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Գիրքը նկարազարդված է գծանկարներով, ճարտարապետական հուշարձանների ու հայկական տարադիմունների լուսանկարներով և պատմական Հայաստանի քարտեզով։

Հոբելյանական հուշամատյան Գումգափուի 250-ամյա դպրաց դասուն և 45-ամյա Գողթան երգչախումբին. 1719—1924, պատրաստեց Վարուժան Քեոսեյան, Իսթանբուլ, 1971, 257 էջ, նկարազարդ:

Այս հուշամատյանի 7 գլուխներում խոսվում է արևմտահայերի դարավոր աթոռանիստ եկեղեցու պատմական դեպքերի ու անցքերի մասին, Գումգափուի մայր եկեղեցու դպրաց դասի հիմնարկության ու գործունեության մասին, այդ թաղի հայ բնակչության կազմության, եկեղեցու և թաղի կյանքի զլխավոր պատմական անցքերի, XVII դարի երկրորդ կեսում մայր եկեղեցու հովանու տակ հաստատված տպարանի և նրա հրատարակությունների մասին և այլն: Գիրքը ճոխացված է համապատասխան նկարներով և զանազան թերթերից ու հանդեսներից կարևոր մեջբերումներով:

Հուշամատյանը կազմող Վարուժան Քեոսե-

յանը իր «Երկու խոսքում» գրում է. «Մատյանիս պատրաստության ատեն ձեռքի տակ ունեցանք Իսթանբուլահայ եկեղեցիներու ու երգչախումբերու հրատարակած հիշատակարանները, Օրհմիա Չելեբիի Իսթանպուլո պատմությունը, Ս. Փ. Հիվանդանոցի օրացույց դիրքերը, դպրաց դասերու կանոնադիրները (ոչ ամբողջական), ցանցառ թիվով կոնդաններ, տարեգրքեր, պատմագիրքեր, զանազան այլ գիրքեր, հողվածներ, հողվածաշարքեր, թղթակցություններ, անձնական հուշեր, Մայր եկեղեցվո դպրաց Դասուն նամակագրությունները և ատենագրությունները, որոնց ամենահին թվականները շուրջ հարյուր տասը տարվան են» (էջ 10):

ՔԱՍՈՒՆԻ ԵՐՎԱՆԻ Հ., Ռուբեն Ա. և Ռուբինյան Իշխանության հիմնադրությունը, Բեյրութ, 1972, 94 էջ:

Աշխատությունը բաղկացած է 4 գլուխներից: Գրքի առաջին գլուխը վերնագրված է՝ «Հայ և օտար սկզբնաղբյուրները Ռուբենի և Ռուբինյան իշխանության հիմնադրության մասին»: Այստեղ հեղինակը նպատակահարմար է գտնում որևէ եզրակացության հանգելուց առաջ ներկայացնել հայկական սկզբնաղբյուրներում (Մատթեոս Ուռհայեցի, XII դարի ժամանակագիր Սամվել Անեցի, Սմբատ Սպարապետ, Կիրակոս Գանձակեցի, XIII դարի պատմիչ Վարդան Արեւելցի, XIII դարի արքունի մատենագիր Վահրամ Բաբունի, Հեթում պատմիչ, Մխիթար Այրիվանեցի, Ներսես Պալիեց, XVII դարի ժամանակագիր Դավիթ Բաղիշեցի, XVII դարի մատենագիր Մարտիրոս Ղրիմեցի, XVII դարի Անանուն ժամանակագիր) Ռուբեն Ա-ի և Ռուբինյան իշխանության հիմնադրման հանգամանքների մասին եղած վկայությունները, ինչպես նաև օտար սկզբնաղբյուրների կարծիքները (Միքայել Ասորի, XIII դարի ասորի մատենագիր Կիկորիոս Աբուլ-Ֆարաժ, Հովհան Դարդել և ուրիշներ):

Գրքի երկրորդ «Ո՞վ էր Ռուբեն» գլխում, Ռուբենի անձի և Ռուբինյան իշխանության հիմնադրման մեջ նրա դերը քննարկելիս հեղինակը վերոհիշյալ հայ և օտար սկզբնաղբյուրներից առավել ուշադրություն է դարձնում Մատթեոս Ուռհայեցու և Սմբատ Սպարապետի վկայություններին, հաշվի առնելով, որ նրանք ժամանակակից են Ռուբենի և Կիլիկյան հայկական իշխանության հիմնադրման ժամանակաշրջանին: Հեղինակը նշում է, որ նոր և նորագույն պատ-

մագրության մեջ ևս շարունակվում է Ռուբենի ծագման շուրջ ստեղծված անորոշությունը և տարբեր պատմաբաններից մեջբերումներով բացահայտում է այն (Մ. Չամչյան, Ս. Պալասանյան, Մ. Մամուրյան, Մ. Օրմանյան, Հ. Չազմազճյան, Սահակ Տեր-Մովսեսյան, Կ. Բասմաչյան, Ա. Ալպոյաճյան, Հ. Ասատուրյան, Հ. Աճառյան, Գ. Միքայելյան, Ս. Պողոսյան, Հ. Տեր-Ղազարյան և ուրիշներ): Ե. Հ. Քասունի մատնանշում է, որ արևմտյան պատմագրության մեջ ևս նշվում է հայկական աղբյուրների անորոշությունը (Ժակ դը Մորգան, Ն. Յորգա, Ռենե Գրուսն և այլն) և որ «նորագույն շրջանի պատմագիրներեն նի՝ ողայոս Աղոնցն է միայն, որ կփորձեն ամբողջական սերտողությամբ մը անորոշություն հուրս բերել Ռուբենի դեմքը ու պատմական տվյալներու վրա հենած որոշել, թե ով էր ան» (էջ 40):

Ռուբենի ծագման մասին հայ և օտար աղբյուրների տեսակետների տարբերությունը շարունակվում է նաև Աղոնցից հետո: Այդ կապակցությամբ հեղինակը գրում է. «Այս բոլորեն ետք կրկին անհրաժեշտ կըլլա վերադառնալ Ուռհայեցիի և Սմբատ Սպարապետի, հստակորեն կարենալ ըսելու, թե Ռուբեն կսերբը Հայաստանցի ազատներու ընտանիքն մը, և որպես Գաղիկ Բ-ի ազատներեն մեկը, իբր զինվորական կմնար անոր ծառայության մեջ» (էջ 45):

Գրքի երրորդ գլուխը վերնագրված է՝ «Ռուբինյան իշխանության հիմնադրությունը նոր պատմագիրներու համաձայն»: Հեղինակն այստեղ նշում է, որ հայկական սկզբնաղբյուրների

հակասական վկայությունների հետևանքով արևմտյան նոր պատմագրության մեջ ևս չի կարելի նորություն գտնել Կիլիկյան հայկական իշխանության հիմնադրման հարցում:

Ռուբինյան իշխանության հիմնադրությունը՝ գլխում հեղինակը աշխատում է ճշտել Ռուբենի՝ Կիլիկիայում հաստատվելու թվականը և եզրակացնում է, որ «պատմական վերահիշյալ ճշմարտություններն թելադրված, պիտի ըսենք, ոչ մեկ կասկած ալլևս, որ Ռուբեն և Կոստանդին Կիլիկիո սահմաններում վրա իրենց բնակությունը կսկսեին Փիլարտոսի, և Կիլիկիո մեջ հայկական իշխանության իրավ հիմնադիրը կհանդիսանար Փիլարտոս, ինչպես կեզրակացնեն Կոմագենացի» (էջ 74): Այս գլխի վերջում Ե. Քասունին գրում է. «Կոստանդին հաջողած

էր դուրս գալ իր սահմաններեն և Կիլիկիո մեջ հաստատած Ռուբինյան իշխանությունը առաջին անգամ ըլլալով մասնակից դարձնել միջազգային քաղաքական անցուղարձերուն: Կոստանդին ոչ միայն կհանդիսանար Ռուբինյան իշխանության հիմնադիրը Կիլիկիո մեջ, այլ նաև՝ Խաչակիրներու միջոցով եվրոպայի հետ կապ հաստատող Ռուբինյան առաջին իշխանավորը» (էջ 83):

Աշխատության վերջում տրված է անգլերեն լեզվով ամփոփում (էջ 85—88), ինչպես նաև հայ ու օտար սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների մատենագիտություն (էջ 89—92):

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

(Մատենագիտություն, 1971)

Մեկ անգամ ևս ներկայացնում եմ Սովետական Միությանից դուրս հրատարակվող ոչ հայկական հանդեսներում լույս տեսած հայագիտական հոդվածների ցանկը («Ոչ հայկական» ասելով նկատի են առնվում այն հանդեսները, որոնք լույս են տեսնում օտար լեզուներով): Ինչպես նախկինում, այս ցանկում ևս տեղ չեն տրված հայկական հնագիտությանը կամ ուրարտագիտությանը վերաբերող հոդվածներին, սակայն հնարավոր ամեն ինչ արված է՝ ընդգրկելու համար հայ ժողովրդի պատմությանը, հայերենին, հայ գրականությանը, արվեստին ու երաժշտությանը վերաբերող բոլոր հրապարակումները:

Դժվար է, իհարկե, երաշխավորել, որ այս մատենագիտական ցանկերը կարող են ամբողջական լինել, բայց հույս ունեմ, որ դրանք կարող են օգտակար լինել բոլոր նրանց, ում դուրամատչելի չեն արևմտյան շատ պարբերականներ:

M. F. Baltaceanu, Description phonologique du vocalisme de l'arménien classique, *Actes du X^e congrès internationale de linguistes*, Bucharest 1971, vol. IV, p. 139—144.

H. M. Barikjian, La conquête de l'Arménie par l'Empire byzantin, *Revue des Etudes arméniennes* (Paris), N. S. vol. 8 (1971), p. 327—340.

[Թարգմանված է «Պատմա-բանասիրական հանդեսի» 1970 թ. № 2-ից, էջ 81—92]:

P. Z. Bedoukian, Coinage of the late Arsacids, *Museum Notes* (American Numis-

matic Society, New York), vol. 17 (1971), p. 137—139.

P. Z. Bedoukian, Medieval Armenian coins, *Revue des Etudes arméniennes* (Paris), N. S. vol. 8 (1971), p. 365—431.

W. Beridze, Une fois encore au sujet de l'église de Djvari, des rapports entre les architectures géorgienne et arménienne, et de certain articles ayant trait à ces questions, *Bedi Kartlisa* (Paris), vol. 28 (1971), p. 122—132.

M. Canard, L'aventure caucasienne du spathaire Léon, le futur empereur Léon II, *Revue des Etudes arméniennes* (Paris) N. S. vol. 8 (1971), p. 353—357.

M. Canard, Les impôts en nature de l'Arménie à l'époque Abbasside, *Revue des Etudes arméniennes* (Paris), N. S. vol. 8 (1971), p. 359—363.

M.-L. Chaumont, Les Sassanides en Arménie au III^e siècle, *Proceedings of the 27th International Congress of Orientalists, Michigan 1967*, ed. D. Sinor, Wiesbaden 1971, p. 67—68 [ևս *Recherches sur l'Histoire de l'Arménie*, Paris 1969, աշխատության ամփոփումը]:

Sir Gerard Clauson, Armeno-Qipčaq, *Rocznik Orientalistyczny* (Warsaw), vol. 34 (1971), pt. 2, p. 7—13.

B. E. Colless, The Traders of the Pearl. The Mercantile and Missionary Activities of Persian and Armenian Christians